քեզ Ջանալ և հոգս տանիլ 'ի վերայ աշխարհիս եթէ արժան տնկել յանտառ, կամ հատանել և զամենայն զոր ինչ պատճառ որ հարկաւորեսցի առատանալոյ աշխարհն մեր, գրուեցաւ 'ի գրունս և այլն։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին։

Ս. Տ. ○
Վ. Տ. ○
Գ. Տ. ○
Մ. Ի. ○
Մ. Գ. ○

Օրինակ նամակի Պեռ Տկարաց:

ԳԼՈՒԽ ՀԳ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան աշխարհին արարատեան, և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ և 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ 'ի տանն հայոց, տուաք քեզ նամակ Շնորհաց և պաշտօնի տկարաց պետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Յովհաննէս գվնու իշխեսցես 'ի վերայ ամենայն տան տկարաց, որում պահպանի 'ի տանէն հայոց, տուաք իշխանութիւն քեզ ծախիւք տանն հայոց յօրինել մերձ ամենայն մայրաքաղաքաց լայնարձակ տուն վասն բնակութեան տկարաց և խոցելոց,